

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

«ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՆԸ ԻՐԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1991-2016 ԹԹ.)

Խորհրդային Միության փլուզումից ու Հարավային Կովկասում երեք հանրապետությունների անկախության հռչակումից հետո տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակով պայմանավորված, Ադրբեջանը որպես շիական-թյուրքախոս երկիր, հայտնվեց Հարավային Կովկասում Թուրքիայի և Իրանի ծավալած մրցապայքարի առանցքում: Հետխորհրդային նորանկախ հանրապետությունների ձևավորմանը զուգընթաց թյուրքական գործոնը դարձավ հարավկովկասյան տարածաշրջանում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցությունը սահմանափակելու միջոցներից մեկը: Պանթյուրքիզմի գաղափարախոսության արդիականացված խմբագրությունները ԽՍՀՄ-ի փլուզումից հետո արդեն լայն տարածում էին ստացել Թուրքիայի իշխող վերնախավում: 1992 թ. Սուլեյման Դեմիրելը, զբաղեցնելով Թուրքիայի վարչապետի պաշտոնը, ազդարարեց «Թյուրքական աշխարհի» ծնունդը¹:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Իրանը փորձեց, պատմական, մշակութային և կրոնական ընդհանրություններն օգտագործելով, իր ներկայությունն ապահովել Ադրբեջանում, սակայն, ինչպես 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, այնպես էլ 1991 թ. Ադրբեջանի Հանրապետության քաղաքական էլիտայի որոշումների կայացման վրա նշանակալի ազդեցություն էր գործել «թյուրքականության» գործոնը: Նորանկախ Ադրբեջանը, որդեգրելով ընդգծված թուրքամետ դիրքորոշում և որպես զարգացման ուղի ընտրելով կառավարման «աշխարհիկ-թյուրքական մոդելը», մերժեց իսլամական կառավարման «իրանական մոդելը»՝ այն համարելով որպես սպառ-

¹ Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001 թ.), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2007, էջ 90:

նալիք՝ ուղղված իր պետական շահերին²:

Ի տարբերություն Թուրքիայի՝ Իրանը փոքր-ինչ ուշ ճանաչեց Ադրբեջանի անկախությունը: Բաքվի և Թեհրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին շրջափուլում, մասնավորապես Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի (1991-1992 թթ.) պաշտոնավարման շրջանում Բաքվի և Թեհրանի հարաբերությունները բնականոն զարգացում ապրեցին, սակայն Աբուլֆազ Էլչիբեյի (1992-1993 թթ.) ղեկավարման օրոք երկկողմ հարաբերություններում արդեն ձևավորվել էր փոխադարձ անվստահության մթնոլորտ: Ա. Էլչիբեյի ղեկավարած «Ժողովրդական ճակատ» կուսակցության որդեգրած ազգայնական-պանթուրքիստական գաղափարախոսության հիմքում ընկած էր այսպես կոչված «Հյուսիսային Ադրբեջանի» և «Հարավային Ադրբեջանի» (Իրանի Ատրպատական նահանգը) միավորումը «Մեծ Ադրբեջանի» կազմում³:

Հակառակ ադրբեջանցիների պնդման՝ «Բրիտանիկա» հեղինակավոր հանրագիտարանը նշում է, որ Իրանական Ատրպատականը սահմանակից է թալիշների երկրին, այսինքն՝ «Ադրբեջանի» ու «ադրբեջանցիների» մասին որևէ հիշատակություն չկա: Ավելին՝ Ատրպատականի բնակիչների թվում նշվում է թյուրքերի, հայերի, պարսիկների ու քրդերի գոյության մասին, բայց ոչ ադրբեջանցիների⁴:

Թյուրքական-ազգայնական գաղափարներն ադրբեջանցիների շրջանում արդեն իսկ լայն տարածում էին ստացել ԽՍՀՄ-ի գոյության

کریم زاده محمد. بررسی تطبیقی روابط ترکیه و ایران با جمهوری آذربایجان، فصلنامه "تحقیقات سیاسی و بین
المللی"، تهران 1390، شماره 7، ص. 266:

مهدی امیری: ارزیابی روابط ایران و جمهوری آذربایجان در قرن بیستم، مجلس و پژوهش، تهران 1385،
شماره 53، صفحه 251-252: (Մեհդի Ամիրի, Իրան-Ադրբեջան հարաբերությունների
գնահատումը 20-րդ դ., «Մաջլես վա Փաժուհեշ», Թեհրան, 2006, պրակ 53, էջ
251, 252):

⁴ Նահապետյան Հ., Քանի՞ տարեկան է ադրբեջանցի ժողովուրդը. կրկին
ափշերոնյան մահմեդականների ինքնության շուրջ, «21-րդ դար», Երևան,
2014, թիվ 6 (58), էջ 66:

վերջին տարիներին: «Թյուրքականության» գաղափարներով ոգևորված՝ «Ժողճակատի» համակիրների մասնակցությամբ 1990 թ. հունվարի սկզբին Իրանի սահմանին արձանագրվել էին մի քանի լուրջ միջադեպեր, որոնք ուղղակիորեն սպառնում էին Իրանի տարածքային ամբողջականությանը: Նրանց հիմնական պահանջն այսպես կոչված «Հյուսիսային Ադրբեջանի» և «Հարավային Ադրբեջանի» միավորումն էր⁵:

Իրանի նկատմամբ Ադրբեջանի վարած քաղաքականության հիմնական թիրախներն Իրանի հյուսիսային՝ Արևմտյան Ատրպատական (3 մլն բնակիչ), Արևելյան Ատրպատական (3.5 մլն բնակիչ) և Արդաբիլ (մինչև 1 մլն բնակիչ) նահանգների թյուրքախոս բնակչությունը և նշված նահանգների թյուրքախոս այն ընդդիմադիր քաղաքական գործիչներն են, որոնք տարբեր պատճառներով քաղաքական ապաստան են ստացել Թուրքիայում, Ադրբեջանում և Եվրոպայում:

Ադրբեջանի կողմից «թյուրքականության» գործոնի շահարկումն ուղիղ համեմատական է Իրանի հետ այդ երկրի ունեցած հարաբերություններին: Այս համատեքստում 1993 թ. ԱՀ նախագահ Էլչիբեյը, «Turkish Times» պարբերականին տված հարցազրույցում, կասկածի տակ դնելով Իրանի տարածքային ամբողջականությունը, համոզմունք էր հայտնել, որ քրդերը, բելուջները, արաբները, ֆարսերն ու թուրքերն իհՀ տարածքում իրենց անկախ պետությունները կձևավորեն⁶:

Պայմանականորեն 1991-1993 թթ. կարելի է համարել «թյուրքականության» ձևավորման շրջան, 1993-2003 թթ.՝ տարածման, իսկ արդեն 2003-2016 թթ. այն դարձավ Իրանի վրա ճնշում գործադրելու արդյունավետ գործիքներից մեկը:

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի (1993-2003 թթ.) պաշտոնավարման ընթացքում Բաքուն վերանայեց Թեհրանի նկատմամբ նախորդ իշխանությունների վարած հակաիրանական քաղաքականությունը: «Թյուրքականության» գործոնը բացահայտ շահարկելու փոխարեն Ադրբեջանի նոր իշխանությունները Թուրքիայի աջակցությամբ

⁵ Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. հարևանների թե՛ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ակտյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2003, XXII, էջ 10:

⁶ Նույն տեղում:

ծեռնամուխ եղան Իրանում թյուրքական-ազգայնական վերահսկելի խմբավորումների ձևավորմանը, որոնց գործողությունները համակարգում էր Թեհրանում Ադրբեջանի դեսպանությունը⁷:

Նշված կառույցներից հատկապես աչքի են ընկնում «Հարավային Ադրբեջանի ազգային-ազատագրության ճակատ» (GAMAC) կազմակերպությունը, «Gunaz.tv» խոշոր մեդիա կազմակերպությունը, «Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսը» (ԱԱԿ), որոնց կենտրոնակայանները գտնվում են Բաքվում: Այս կառույցների հիմնական առաքելությունն է, թյուրքախոս ատրպատականցիների շրջանում լեզվական հակասություններ առաջացնելով, այսպես կոչված «Պատմական Ադրբեջանն» անջատել Իրանից: Այդ նպատակով «թյուրքականության» գաղափարախոսությունն ամրակայվեց նաև Ադրբեջանի Հանրապետության գիտակրթական քաղաքականության մեջ: Մասնավորապես այդ երկրի դպրոցական դասագրքերում Իրանի հյուսիսային թյուրքախոս, այդ թվում և քրդաբնակ նահանգները ներկայացվում են որպես թյուրքական «Մեծ Ադրբեջանի» մաս⁸:

Պետք է նշել, որ թյուրք-ադրբեջանական համատեղ գործողությունները, Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականությամբ պայմանավորված, վերջին տասնամյակում պարբերաբար ստացել են նաև Վաշինգտոնի աջակցությունը⁹:

ԱՀ նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնավարման երկրորդ շրջանում, երբ Իրան-Ադրբեջան հարաբերությունները հասան լարվածության գագաթնակետին, «թյուրքականությունը» ընտրվեց որպես Իրանի վրա ճնշում գործադրելու ազդեցիկ գործիք, և Ադրբեջանի

7-352 حسین احمدی، جمهوری آذربایجان (23 سال تکاپو برای دولت و ملت سازی)، تهران 1394، صفحه 354-354:

(*Ահմադի Հոսեյն, Ադրբեջանի Հանրապետություն, 23 փարվա փնտրվոր ազգ և պետություն սրեղծելու համար, Թեհրան, 2015, էջ 352-354*):

⁸ احمدی حسین، بررسی کتاب های درسی جمهوری آذربایجان، فصلنامه فرهنگی پیمان، تهران 1391، شماره 59، ص. 54-56:

(*Ահմադի Հոսեյն, Ադրբեջանի դպրոցական դասագրքերի ուսումնասիրությունը, «Պայման», Թեհրան, 2012, h. 59, էջ 54-56*):

⁹ Olson R., *The «Azeri» Question and Turkey-Iran relations, 2000-2002, Nationalism and Ethnic Politics, University of Kentucky, 2007, p. 67.*

իշխանությունները սկսեցին ավելի ագրեսիվ քաղաքականություն վարել: Արտերկրից հեռարձակվող հեռուստաալիքների, ռադիոյի, տարատեսակ կայքերի ու սոցիալական ցանցերի միջոցով ատրպատականցիների շրջանում «թյուրքականության» ակտիվ քարոզչություն էր իրականացվում, և Իրանում թյուրքախոսներին առնչվող յուրաքանչյուր միջադեպ Բաքվի կողմից անարձագանք չէր մնում: Ավելին՝ Ադրբեջանի կողմից շահարկվում էր նաև Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների՝ թյուրքախոս և ծագումով Ատրպատականից լինելու հանգամանքը. շատ հաճախ նրանց հայտարարություններն ու գործողություններն ադրբեջանական քարոզչությունը ներկայացնում էր միանգամայն այլ տեսանկյունից¹⁰:

2006 թ. մայիսի 12-ին Իրանի հեղինակավոր և ամենաշատ տպաքանակ ունեցող պարբերականներից մեկը՝ «Իրան» օրաթերթը, մի ծաղրանկար հրապարակեց, որը թյուրքախոս ատրպատականցիներն ընկալեցին որպես վիրավորանք՝ ուղղված իրենց էթնիկական պատկանելությանը¹¹: Այս առնչությամբ ամեն տարի մայիսին Իրանի թյուրքախոս նահանգներում բողոքի ցույցեր են կազմակերպվում, որոնք քարոզչական դաշտում աջակցություն են ստանում նաև Ադրբեջանից¹²:

Նման մի միջադեպ էլ արձանագրվել էր 2015 թ. նոյեմբերին, երբ Իրանի պետական հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումներից մեկի ժամանակ ատրպատականցիների արժանապատվությունը վիրավորող դրվագներ էին ցուցադրվել, ինչը ոչ միայն հարուցել էր Իրանի թյուրքախոս բնակչության, այլև Իրանի Մեջլիսի՝ Ատրպատականից ընտրված պատգամավորների զայրույթը ու հանգեցրել

¹⁰ Аятолла Хаменеи заговорил на азербайджанском языке
<https://haqqin.az/oldage/63661>

¹¹ بازداشت طراح کاریکاتور جنجالی و توقیف روزنامه ایران
(«Իրան» օրաթերթի գործունեության կասեցումն ու ծաղրանկարի հեղինակների ձերբակալումը)
http://www.bbc.com/persian/iran/story/2006/05/060523_mf_cartoon.shtml

¹² Пикет в Баку перед посольством Ирана
<https://www.radioazadlyg.org/a/24183708.html>

բազմահազարանոց ցույցերի¹³: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավորներն ու ադրբեջանական առաջատար լրատվամիջոցներն ակտիվորեն արձագանքել էին միջադեպին՝ իրենց հրապարակումներում առկա ձևակերպումներով ավելի սրելով իրավիճակը¹⁴:

Ադրբեջանի նախագահը, 2006 թ. ընտրվելով ԱԱԿ-ի համակարգող խորհրդի նախագահ, փաստացի Բաքվի հակաիրանական քաղաքականության իրականացման գործառույթը վերցրեց իր անմիջական վերահսկողության ներքո¹⁵:

2013 թ. Ադրբեջանն Իրանի մշակութային-պատմական արժեքների դեմ մի նոր արշավ սկսեց: Ադրբեջանի մշակույթի նախարարության որոշմամբ պարսից դասական գրականության մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Նիզամի Գյանջևիի գերեզմանի պատերին ամրացված պարսկերեն բանաստեղծությունների զարդաքանդակները քանդվեցին՝ փոխարինվելով թյուրքերեն տարբերակով: Ադրբեջանի այդ քայլն արժանացավ Իրանի ԱԳ և մշակույթի նախարարությունների խիստ քննադատությանը¹⁶:

2010-2013 թթ., երբ Իրան-Ադրբեջան հարաբերությունները գտնվում էին լարվածության գագաթնակետին, Ադրբեջանի խորհրդարանում մի խումբ պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրվեց մի առաջարկություն, որը նախատեսում էր երկիրը վերանվանել «Հյուսիսային Ադրբեջան», այն պատճառաբանությամբ, թե «*Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Ադրբեջանը կիսվել է երկու մասի, իսկ «Հարավային Ադրբեջանը» մնացել է Արաքսի մյուս կողմում*՝

واکنش نمایندگان آذربایجان به اهانت برنامه "فیتله"¹³

(Ադրպարականի պարզամավորների արձագանքը՝ «Ֆիթիլե» հաղորդման վիրավորանքին)

<http://www.isna.ir/news/94081710052/>

¹⁴ К протестам азербайджанцев присоединились и другие народы Ирана

<https://haqqin.az/news/56871>

¹⁵ Состав координационного совета азербайджанцев мира

<http://azertag.az/ru/xeber/645191>

نظامی اسیر تحریف هاء، روزنامه "کار و کارگر"، 2013 سپتامبر، شماره 6452، ص. 8

(Նիզամին՝ զեղծարարությունների զոհ, «Քար օ քարգար» օրաթերթ, 2013 թ. սեպտեմբեր, թիվ 6452, էջ 8):

Իրանի տարածքում»¹⁷:

Անջատողականության սպառնալիքին դիմագրավելու համար, Իրանի կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում, Ադրբեջանի հետ ընդհանուր ցամաքային սահմանը փոքրացնելու նպատակով, դեռ 1994 թ. ԻԻՀ Արևելյան Ատրպատական նահանգի տարածքում Արդաբիլ անվանը նոր նահանգ էր կազմավորվել¹⁸:

Տարիներ շարունակ Ադրբեջանն ու Թուրքիան, Իրանի թյուրքախոս ատրպատականցիների (ազարիներ) մայրենի լեզվի հարցը շահարկելով, յուրաքանչյուր պատեհ առիթն օգտագործում են՝ բարձրաձայնելով, թե Իրանում բնակվող «25 միլիոն ադրբեջանցիները» (նկատի ունենալով թյուրքախոս բնակչությանը) զրկված են իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքից¹⁹:

Այս առումով «թյուրքականությունն» իր ազդեցությունն է գործել ոչ միայն Թավրիզի, Ուրմիայի և թյուրքախոս այլ քաղաքների բնակչության վրա, այլ դրա ազդեցությունը վերջին տարիներին նկատելի է նաև բարձրաստիճան պաշտոնյաների դիրքորոշումներում:

Մասնավորապես 2016 թ. հունիսին Թավրիզի «Tractor Sazi» ֆուտբոլային ակումբը ՀՀ ֆուտբոլի ազգային հավաքականի պաշտպան Վարազդատ Հարոյանի հետ երկու տարվա պայմանագիր էր կնքել, սակայն կարճ ժամանակ անց ակումբի ղեկավար Մոսթաֆա Աջորլուն հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ հրաժարվում է հայազգի ֆուտբոլիստի հետ գործարքից: Նա իր որոշումը բացատրել էր նրանով, թե «*եկել է Թավրիզ, որպեսզի միավորի թյուրքախոս ազարիներին, իսկ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստի*

¹⁷ Տե՛ս Աзербայժան ևսի Տևրնի Ազերբայժան?

<http://echo.az/article.php?aid=19047>

¹⁸ گزارش مرکز پژوهشها از نقش نمایندگان آذربایجان قبل از انقلاب

(*Մեջլիսի հեղափոխական կենտրոնի զեկույցը Արրպատականի պարզամավորների՝ հեղափոխությունից առաջ ունեցած դերակատարության մասին*):

http://rc.majlis.ir/fa/news/print_version/764661

¹⁹ Протесты азербайджанцев в Иране набирают оборот

<http://www.echo.az/article.php?aid=91899>

հետո գործարքը կարող է սպառնալ Իրանի թյուրքախոս բնակչության միասնությանը»²⁰:

Ատրպատականում տարածում ստացած «թյուրքականության» ալիքը թուլացնելու նպատակով վերջին տարիներին « آذربایجان ترک نیست، ترک زبان است» (Արրպատականը թյուրք չէ, թյուրքախոս է) անվամբ շարժում է սկսվել, որի շրջանակներում կազմակերպվել են գիտա-ժողովներ, տպագրվել գրքեր, գործարկվել կայքեր և այլն²¹: Այդ շարժմանն իրենց աջակցությունն են ցուցաբերել նաև ԻԻՀ Մեջլիսի թյուրքախոս մի շարք պատգամավորներ:

2013 թ. նախագահ ընտրվելուց անմիջապես հետո Հասան Ռոուհանիի կառավարությունն էթնիկական խմբերի ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն առնչվող շոշափելի բարեփոխումներ է իրականացրել²², որոնց շրջանակներում Իրանի կառավարությունը Թավրիզի համալսարանում «թյուրքերեն լեզու և գրականություն» առարկան դասավանդելու մասին որոշում է կայացրել, իսկ 2015 թ. մայիսին Հասան Ռոուհանիի մասնակցությամբ Թավրիզում բացվել է «Ատրպատականի արվեստի և մշակույթի հիմնադրամի» շենքը:

Բացի դրանից՝ ԻԻՀ հեռուստառադիոընկերության կայացրած որոշման համաձայն, 2015 թ. մայիսից իրանական «Սահար» հեռուստաալիքը հեռարձակվում է նաև ատրպատականյան թյուրքերենով, որը հասկանալի է նաև Ադրբեջանի Հանրապետության բնակչության շրջանում: Այսպիսով, Իրանի իշխանություններին մի կողմից հաջողվել է լուծել թյուրքախոս ատրպատականցիների լեզվի՝ անպաշտպան լինելու շուրջ արհեստականորեն ստեղծված խնդիրը, իսկ մյուս կողմից

نگاه سیاسی و ژئادپرستانه در یک انتقال فوتبالی
(Քաղաքական և ռասիստական մոտեցում ֆուտբոլային գործարքին)
<http://www.isna.ir/news/95031711255/>

کیمهر فیروزی، آذربایجان ترک نیست، ترک زبان است، تهران 1387، ص. 124:21
(Քիամեհր Ֆիրուզի, Արրպատականը թյուրք չէ, թյուրքախոս է, Թեհրան, 1999, էջ 124):

22 President Rouhani in a statement while unveiling and signing Charter on Citizens' Rights
<http://www.president.ir/en/96863>

ԻԻՀ-ն հնարավորություն է ստացել Ադրբեջանի հասարակության շրջանում մեծացնելու կրոնական-մշակութային ազդեցությունը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ, վերջին տասնամյակում Ատրպատականում տեղի ունեցած զարգացումներով պայմանավորված, «թյուրքականության» գործոնի սպառնալիքը զգալիորեն աճել է, և Իրանի քաղաքական էլիտայի մոտ առկա է այն գիտակցումը, որ Ադրբեջանի իշխանությունների՝ պատմությունը կեղծելու, նպատակաուղղված հակաիրանական քաղաքականություն վարելու արդյունքում այդ երկրում մեծանում է մի սերունդ, որը տարիներ անց Իրանը ու իրանցիներին կդիտի որպես թշնամիների:

Հետևաբար՝ ԻԻՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը հակադրություններից խուսափելու նպատակով, Իրանի թյուրքախոս բնակչության պահանջները բավարարելու հարցում վերոնշյալ քայլերն է իրականացրել՝ փաստացի Ադրբեջանին զրկելով Ատրպատականի թյուրքախոս բնակչության լեզվի հարցը շահարկելու հնարավորությունից:

ISRAYELIAN ARMEN

“TURKISM” FACTOR IN IRAN-AZERBAIJAN RELATIONS (1991-2016)

In the current article, we studied the impact of the “Turkism” factor on Iran-Azerbaijan relations after the USSR collapse.

Conditionally, we can consider that “Turkism” was formed in 1991-1993, and it began to spread in 1993-2003. In 2003-2016, “Turkism” became one of the effective instruments of putting pressure on Iran.

During Abulfaz Elchibey’s presidency (1992-1993) in Azerbaijan, Baku’s actions were a direct threat to Iran’s territorial integrity.

During Heydar Aliyev’s presidency (1993-2003), instead of openly speculating on “Turkism” factor, Azerbaijan’s new authorities began to form turkic nationalistic groups with Turkey’s help.

During the second phase of Ilham Aliyev's presidency, "Turkism" became one of the most effective instruments of putting pressure on Iran, and the Azerbaijani authorities adopted a more aggressive policy.

In the last decade, due to developments in Atropatene (*the provinces of East Azerbaijan and West Azerbaijan*), the threat of the "Turkism" factor has significantly increased.

The government of Hassan Rouhani, the current president of the Islamic Republic of Iran, has made a number of reforms in order to satisfy the needs of Iran's Turkic-speaking population and to prevent contrasts. Therefore, he in fact deprived Azerbaijan of the opportunity to speculate "Turkism" question.